ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136

ք.Երևան

« 19 » « 05 » 2026թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Վ.Պապիկյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, «ՂԱԶԱՐՅԱՆ ՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Ղազարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի վարչական շրջաններում կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները՝ իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **6312380 (վեց միլիոն երեք հարյուր տասներկու հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4. 2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է
տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և

կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 3.1 և N 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.14 Սույն պայմանագրով Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է **Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչությունը**:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Երևանի քաղաքապետարան	«Ղազարյան Շին» ՍՊԸ
ք. Երևան, Արգիշտիի 1	Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, հ.6/1
ՀՀ ֆինանսների նախարարության	շենքի հ.35
գործառնական վարչություն	Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011057982	Հ/Հ 19300980511300
ՀՎՀՀ 02593108	ՀՎՀՀ 08621867
Վ. Պապիկյան _____ (ստորագրություն) Կ.Տ	Վ. Ղազարյան _____ (ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«19» «05» 2026թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136
ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Երևան քաղաքի վարչական շրջաններում կոյուղագծերի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ

ՀՀ դրամ

Ծառայությունների							
Հ/Հ	***գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)***	***տեխնիկական բնութագիրը***	***Հ/Մ***	***ընդհանուր գինը***	***ընդհանուր քանակը***	***մատուցման***	
						հասցեն	***ժամկետը***
1.	98111140/218	1. Հեղինակային հսկողությունն ընթանում է ամբողջ շինարարության ընթացքում՝ ապահովելով շինարարության իրականացման համապատասխանությունը հաստատված ճարտարապետաշինարարական նախագծերին: 2. Հեղինակը ներկայացնում է Պատվիրատուին հեղինակային հսկողություն իրականացնող աշխատակիցների ցուցակ, նշելով հեղինակային խմբի ղեկավարին: 3. Հեղինակային հսկողությունն ավարտվում է շինարարության ավարտական ակտը սահմանված կարգով ձևակերպելուց հետո, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով: 4. Հեղինակային հսկողության ծառայությունն իրականացվում է պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում: 5. Հեղինակային հսկողի պարտականություններն են՝	դրամ	448550	1	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կոմիտասի պողոտա, հ.1 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
2.	98111140/220		դրամ	166660	1	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Վ. Համբարձումյան փողոց, հ.8/1 շենք	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
3.	98111140/219		դրամ	316270	1	ք. Երևան, Արաբկիր վարչական շրջան, Կիևյան փողոց, հ.8 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
4.	98111140/222		դրամ	254630	1	ք. Երևան, Էրեբունի վարչական շրջան, Նոր Արեշ 15-րդ փողոց, հ.9 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
5.	98111140/223		դրամ	333030	1	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Աղայան փողոց, հ.13 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

6.	98111140/224	• Պարբերաբար մեկնում է շինարարական օբյեկտ, ինչպես նաև՝ Պատվիրատուի հատուկ կանչով և շինարարական որոշակի աշխատանքների կատարման ժամանակ դեպքերում: • Հետևել քաղաքաշինական օբյեկտի իրականացման համապատասխանությունը հաստատված նախագծի պահանջներին ու լուծումներին: • Ժամանակին լուծել նախագծին վերաբերվող՝ շինարարության ընթացքում ծագած հարցերը, համաձայնեցնելով այն Պատվիրատուի հետ: • Շինարարության վարման ընդհանուր մատյանի համապատասխան բաժնում գրանցում է նախագծային լուծումներից կատարված շեղումները, այդ մասին տեղյակ պահելով Պատվիրատուին: • Անհրաժեշտության դեպքում սահմանված կարգով կատարում է նախագծային լուծումների փոփոխություններ և լրացումներ՝ նախապես համաձայնեցնելով Պատվիրատուի հետ; • Շինարարության ընթացքում, անհրաժեշտության դեպքում, Պատվիրատուի պահանջով կատարում է նախագծային լուծումների փոփոխություններ և լրացումներ: • Գտնել շինարարության ժամանակ առաջացող պրոբլեմները և առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքներն արագացնելու և աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար: • Նախագծային փոփոխությունների կատարման դեպքում մեկշաբաթյա ժամկետում Պատվիրատուին ներկայացնել փոփոխության արդյունքում կատարվելիք նոր աշխատանքների միավորի գնահաշվարկ՝ նյութերի գներն ընդունելով տվյալ ամսվա տեղեկագրում ներառված գները: • Կապալառուի կողմից ներկայացված և Պատվիրատուի կողմից հավանություն ստացված առաջարկությունները քննարկել և անհրաժեշտության դեպքում կատարել համապատասխան նախագծային փոփոխություններ:	դրամ	366110	1	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Այգեստան 11-րդ փողոց, հ.127 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
7.	98111140/225		դրամ	317610	1	ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Չարենցի փողոց, 2-րդ նրբանցք, հհ.32/2, 32/3, 32/4 և 32/7 հասցեներ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
8.	98111140/226		դրամ	360650	1	ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան, Սվաճյան փողոց, հ.58 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
9.	98111140/227		դրամ	297000	1	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Բանավան թաղամաս, հ.5 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
10.	98111140/228		դրամ	217870	1	ք. Երևան, Նոր Նորք վարչական շրջան, Մոլդովական փողոց, հ.26/2 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
11.	98111140/230		դրամ	338010	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Գորգագործների փողոց, հ.24 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
12.	98111140/237		դրամ	152220	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Արարատյան փողոց, հ.64 հասցեից հ.66 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
13.	98111140/236		դրամ	177950	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Արշակունյաց հ.54/2 հասցեից հ.65 դպրոցի խաչմերուկ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

14.	98111140/234	• Պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով, ինչպես նաև քաղաքաշինության բնագավառում ՀՀ օրենսդրությամբ իր վրա դրված պարտականությունների կատարման համար:	դրամ	427820	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Արշակունյաց հհ.42/2, 44/2 և 46/1 հասցեներ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
15.	98111140/229		դրամ	198350	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Գ. Նժդեհի փողոց, հհ.27, 27/2 հասցեներ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
16.	98111140/231		դրամ	331930	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Եղ. Թադևոսյան փողոց, նրբանցք հ.4-ից մինչև Լ. Հայրապետյան 67/2 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
17.	98111140/232		դրամ	449460	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շահամիրյան փողոց հ.3-ից Տարոնցու փողոց, 1-ին նրբանցք հ.16 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
18.	98111140/238		դրամ	39560	1	ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան, Շիրակի փողոց, հ.30 շենք	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
19.	98111140/243		դրամ	115040	1	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Կ. Ուլնեցու փողոց, հ.76 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
20.	98111140/241		դրամ	101340	1	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ռայնիսի փողոց, հ.11/1 ից 37 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
21.	98111140/242		դրամ	225650	1	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Ռուբինյանց փողոց, հ.12/1 հասցե	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

22.	98111140/239		դրամ	408720	1	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Սարկավագի փողոց, հ.32, 34 հասցեներ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:
23.	98111140/240		դրամ	267950	1	ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան, Սարկավագի փողոց, հ.117/1, 117/2 հասցեներ	Շինարարական աշխատանքների կատարմանը զուգընթաց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011057982
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ղազարյան Շին» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, հ.6/1
շենքի հ.35
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300980511300
ՀՎՀՀ 08621867

Կ. Ղազարյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
« 19 » « 05 » 2026թ. կնքված
ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայությունների դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	98111140/218	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա հ.1 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	448550	448550	448550	448550	448550	448550	448550	448550	448550
2.	98111140/220	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Վ. Համբարձումյան փողոցի հ.8/1 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	166660	166660	166660	166660	166660	166660	166660	166660	166660
3.	98111140/219	Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կիևյան փողոցի հ.8 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	316270	316270	316270	316270	316270	316270	316270	316270	316270
4.	98111140/222	Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 15-րդ փողոցի հ.9 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	254630	254630	254630	254630	254630	254630	254630	254630	254630

5.	98111140/223	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աղայան փողոցի հ.13 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	333030	333030	333030	333030	333030	333030	333030	333030	333030
6.	98111140/224	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Այգեստան 11-րդ փողոցի հ.127 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	366110	366110	366110	366110	366110	366110	366110	366110	366110
7.	98111140/225	Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Չարենցի փողոց 2-րդ նրբանցք հհ.32/2, 32/3, 32/4 և 32/7 հասցեների կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	317610	317610	317610	317610	317610	317610	317610	317610	317610
8.	98111140/226	Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Սվաճյան փողոց հ.58 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	360650	360650	360650	360650	360650	360650	360650	360650	360650
9.	98111140/227	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Բանավան թաղամաս հ.5 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	297000	297000	297000	297000	297000	297000	297000	297000	297000
10.	98111140/228	Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոցի հ.26/2 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	217870	217870	217870	217870	217870	217870	217870	217870	217870
11.	98111140/230	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գորգագործների փողոցի հ.24 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	338010	338010	338010	338010	338010	338010	338010	338010	338010
12.	98111140/237	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արարատյան փողոցի հ.64 հասցեից հ.66 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	152220	152220	152220	152220	152220	152220	152220	152220	152220

13.	98111140/236	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց հ.54/2 հասցեից հ.65 դպրոցի խաչմերուկ կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	177950	177950	177950	177950	177950	177950	177950	177950	177950
14.	98111140/234	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց հհ.42/2, 44/2 և 46/1 հասցեների կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	427820	427820	427820	427820	427820	427820	427820	427820	427820
15.	98111140/229	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գ. Նժդեհի փողոցի հհ.27, 27/2 հասցեների կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	198350	198350	198350	198350	198350	198350	198350	198350	198350
16.	98111140/231	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Եղ. Թադևոսյան փողոցի նրբանցք հ.4-ից մինչև Լ. Հայրապետյան 67/2 հասցե կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	331930	331930	331930	331930	331930	331930	331930	331930	331930
17.	98111140/232	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շահամիրյան փողոց հ.3-ից Տարոնցու փողոցի 1-ին նրբանցք հ.16 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	449460	449460	449460	449460	449460	449460	449460	449460	449460
18.	98111140/238	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Շիրակի փողոցի հ.30 շենքի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	39560	39560	39560	39560	39560	39560	39560	39560	39560
19.	98111140/243	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Կ. Ուլնեցու փողոցի հ.76 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	115040	115040	115040	115040	115040	115040	115040	115040	115040

20.	98111140/241	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռայնիսի փողոցի հ.11/1 ից 37 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	101340	101340	101340	101340	101340	101340	101340	101340	101340
21.	98111140/242	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Ռուբինյանց փողոցի հ.12/1 հասցեի կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	225650	225650	225650	225650	225650	225650	225650	225650	225650
22.	98111140/239	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սարկավագի փողոցի հ.32, 34 հասցեների կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	408720	408720	408720	408720	408720	408720	408720	408720	408720
23.	98111140/240	Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Սարկավագի փողոցի հ.117/1, 117/2 հասցեների կոյուղագծի վերակառուցման աշխատանքների հեղինակային հսկողության ծառայություններ	0	0	0	0	267950	267950	267950	267950	267950	267950	267950	267950	267950

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտիի 1
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011057982
ՀՎՀՀ 02593108

Վ. Պապիկյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Ղազարյան Շին» ՍՊԸ
Հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց փողոց, հ.6/1
շենքի հ.35
Բանկ՝ «Կոնվերսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300980511300
ԷՀՄՀ 08621867

Վ. Ղազարյան _____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
« 19 » « 05 » 2026թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136
ծածկագրով գնման պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 2026 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 19 » « 05 » 2026թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136
ծածկագրով գնման պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը
պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված N 4
« 19 » « 05 » 2026թ. կնքված N ԵՔ-ՄԱԾՁԲ-26/136
ծածկագրով գնման պայմանագրի

ԾԱՆՈՒՑՈՒՄ

_____ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. _____-ի և _____-ի միջև «--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_____-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «----------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.10 կետով սահմանված պահանջներին:

_____ _____
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը) ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--» 20 թ.